

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊԶԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
7	բաճկոն	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Գարնանային բաճկոն՝ հանովի ուսադիրներով, կանացի Գարնանային բաճկոնի ձևը, դետալների տեղադրությունը, և օգտագործված նյութերը համաձայն ներկայացվող նմուշի չափանիշների: Բաճկոնը արտադրվում է մուգ կանաչավուն երանգի, անջրանցիկ, ոչ պակաս քան 260 գ/մ2 մակերեսային խտությամբ, 100% պոլիէսթեր բաղադրությամբ գործվածքից (ըստ կտորի նմուշի): Գործվածքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման, թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնին զսպանակավոր փոքր գլխիկով շղթայի միջոցով ամրացված է ռեզիններով կարգավորվող, ձևավոր, մետաղական ներդիր պարունակող հովհարով գլխանոցը: Շղթան ծածկվում է երեսացու կտորի նեղ երիզով: Բաճկոնի օձիքի ներսից ամրացված է կախիչը: Բաճկոնի առաջամասը և թիկունքամասը մշակված է 160 գ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը մզակարված է անջրաթափանց շերտով, իսկ թևքերը՝

80-100 գ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը մզդակարված է անջրաթափանց շերտով: Մզդակարը շեղանկյուն, 8 մմ քայլով: Աստառը՝ ԳՕՍՏ-20272-2014 8-С5-ВІІІ արտիկուլի կամ կանաչավուն գույնի 90 գ/մ2 100 % վիսկոզա գործվածքից: Թիկունքը վերին կտրվածքով՝ կոկետկայով, ուսագոտին՝ ձևավոր: Բաճկոնի փեշերի ներքին եզրերը 5.5-6.6սմ լայնքով, մշակված են ռեզինային գոտիով՝ զարդակարով, կամ ռեզին երկտակ գործվածքի համադրությամբ: Կոճկվում է կենտրոնական մուգ կանաչ գույնի պլաստմասե շղթայական կոճկվածքով՝ մեկկողմանի տրակտոր տեսակի համար 6 շղթայով, կրծքամասի երկայնքով, զույգ կարգաշերտով կափույրը ծածկում է շղթան: Կրծքամասում, կոկետկայից ներքև կարված են վերին աջ և ձախ գրպանների ձևավոր կափույրները, որոնք կոճկվում են մետաղական կոճգամներով: Գոտկատեղի ներքին զույգ գրպանները շեղ կտրվածքով են, կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ կանաչ երանգի տրակտոր տեսակի ատամնավոր շղթայով, լուսանցքը՝ 21-23սմ: Բաճկոնի ներսից՝ ձախ և աջ կրծքամասի հատվածում, մշակված են ծոցագրպաններ, որոնք փակվում են (կոճկվում են) ձախը՝ շղթայով, իսկ աջը՝ կոճակով: Կրծքամասի աջ և ձախ կողմերում, կոկետկայից վեր, համաչափ մշակվում է 2.5×12.5 սմ չափսերի կաչուն ժապավեններ “ՀՀ ԱԱԾ” և “արյան կարգ” գրվածքներով կրծքանշանների փակցման համար: Ուսերին մշակվում են երկու 5,0սմ*14,0սմ չափսի ախլակային սլաքածև ուսադիրներ, որոնք կոճկվում են մետաղական, մուգ կանաչ գույնի կոճգամներով: Թևքերի ներքին եզրերը մշակված են 7.0-7.5 սմ լայնությամբ երկտակ, գործվածքային ռեզին մանժետով: Թևքերի վրա ուսակարից 8.0-8.5 սմ ներքև մշակված են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ թևքի վրա ապիկացիայով ամրացված է ասեղնագործված, սեպածև տեսքով 7.0×9.0 սմ չափսի, ՀՀ ԱԱԾ տարբերանշանը: Ասեղնագործ ինքնակաչուններով ուղանկյունաձև

		գրվածքների, ՀՀ ԱՍԾ տարբերանշանի, ուսադիրների տեսակները, ըստ ձևերի և քանակների, չափս - հասակային տվյալները կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, նմուշի հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Փաթեթավորումն ու պիտակավորումը: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, խնամքի վերաբերյալ տեղեկատվություն: Բաճկոնի շղթայի գլխիկից պետք է կախված լինի թղթյա չափս-հասակային ստուգիչ պիտակ, վրան նշված՝ տեսականու չափսը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պլիեթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը:
--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-SLSԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
7			